«Հայկական Խորհուրդ» հեռազրական կենտրոն

Հասարակական կազմակերպություն

Տարեկան Հաշվետվություն
2025 թվական

Բովանդակություն

Նախաբան 3
Գործունեություն 4
Ֆինանսական հաշվետվություն 16
Անձնակազմ 18
Գործընկերներ 19
Կապ մեզ հետ 20

Նախաբան

«**Հայկական խորհուրդ**» հետազոտական կենտրոն հասարակական կազմակերպությունն (նախկինում՝ ***Անվտանգային քաղաքականության հետազոտական կենտրոն ՀԿ***) իրականացնում է խորացված փորձագիտական հետազոտություններ ու վերլուծություններ, տրամադրում քաղաքական, անվտանգային և հասարակական կյանքի տարբեր բնագավառներին առնչվող խորհրդատվություններ:
Խորհուրդը պարբերաբար կազմակերպում է տարաբնույթ միջոցառումներ, այդ թվում՝ հարցազրույցներ, մամլո ասուլիսներ, դասընթացներ, դասախոսություններ, փորձագիտական հանդիպումներ: Կազմակերպությունն իրականացնում է նաև կրթական, հրապարակախոսական, վերլուծական, հետազոտական նախագծեր, հրապարակում, հրատարակում և տարածում է գիտական, վերլուծական, տեղեկատվական բնույթի նյութեր:

Խորհրդի **առաքելությունն է** սերմանել և ջատագովել հասարակության ռացիոնալ մտածողության ձևավորումը:
Խորհրդի **նպատակն է** ապահովել Հայաստանի, տարածաշրջանի և ավելի լայն աշխարհաքաղաքական գործընթացների շուրջ ծավալվող քաղաքական, ռազմաքաղաքական, տնտեսական և այլ հարցերի քննությունը, վերլուծությունը, սպառնալիքների գնահատումը և քաղաքական կանխատեսումները, հակազդեցությունների մշակումը, դրանց վերջնարդյունքների կանխատեսումը և այդ ամենի հանրայնացումը՝ ապացույցների վրա հիմնված ամփոփումների և առաջարկների տեսքով:

Գործունեություն

2025թ.-ին «Հայկական խորհուրդ» հետազոտական կենտրոնն իր աշխատանքային գործունեությունը կենտրոնացրել է հետևյալ ծրագրերի և նախաձեռնությունների իրականացման վրա:

1. «Կառուցելով ավելի դիմադրունակ ժողովրդավարություն» ծրագիր

«Կառուցելով ավելի դիմադրունակ ժողովրդավարություն» դրամաշնորհային ծրագիրը ներառում էր առանձին միջոցառումների շարք, որոնք միտված էին նպաստելու ժողովրդավարական համակարգի դիմադրունակության և ինքնիշխան ընտրության հնարավորության ձևավորմանը:

Ծրագրի գլխավոր նպատակն էր առաջին հերթին ներգրավել երիտասարդներին, և մեդիա հարթակների միջոցով բարձրացնել հասարակության իրազեկվածության մակարդակը՝ ժողովրդավարական գործընթացների, խաղաղության, բարեփոխումների և պրոակտիվ քաղաքականության վերաբերյալ:

Ծրագրի 4 հիմնական բաղադրիչներն էին՝

- ***«Մի քոպեք կարևորի մասին»*** մեդիա կարճ հոլովակները, որոնք անդրադառնում էին մեր դիրքորոշումներին՝ հարևան երկրների հետ խաղաղության, Հայաստանի դիմադրունակության, խոցելիությունների վերացման, եվրոպական ինտեգրման և մի շարք այլ թեմաներին:

Հայաստանն ու Ռուսական ինտեգրացիոն կառույցները

381K դիտում



Ադրբեջանի զինվելու մասին

342K դիտում



Ո՞րն է Հայ-Ադրբեջանական հակամարտության լուծման բաղադրատոմսը

54K դիտում



- ***«Ժողովրդավարական անվտանգություն»*** առցանց պարբերականի աշխատանքը, որը նոր մակարդակի վրա դրեց հետազոտական և վերլուծական միտքն ու ներգրավեց նոր փորձագետների որպես կազմակերպության ասոցացված անդամներ:
- ***«Տնային աշխատանքի միջոցով Հայաստանի դիմադրունակության բարձրացում»*** փաստաթղթի ստեղծումը՝ ուղղված Հայաստանի դիմադրողականության ավելացմանը: Այն հնարավորություն տվեց տարբեր գերատեսչությունների ներկայացուցիչներին և լայն հասարակությանը ծանոթանալու փորձագետների վերլուծություններին և գործնական առաջարկություններին:
- ***«ԱՔՀԿ քննարկումների շարք»***-ի կազմակերպումը, որն իրականացավ կազմակերպության նախաձեռնությամբ Հայաստանում հավատարմագրված դիվանագետների, քաղաքական գործիչների, քաղհասարակության և մեդիա համայնքի ներկայացուցիչների հետ:

«Կառուցելով ավելի դիմադրունակ ժողովրդավարություն» ծրագիրն իրականացվել է 2024 թ. օգոստոս – 2025թ. հուլիս ժամանակահատվածում **Ժողովրդավարության աջակցության ազգային հիմնադրամի (NED)** ֆինանսավորմամբ:

Ծրագրի ընդհանուր բյուջեն **53,980.00** ԱՄՆ դոլար էր:

2. «Խթանելով ժողովրդավարական հաստատութենականացումը» ծրագիր

«Խթանելով ժողովրդավարական հաստատութենականացումը» դրամաշնորհային ծրագիրը նպատակադրված է ամրապնդել ու կայացնել ժողովրդավարական ինստիտուտներն ու կառույցները Հայաստանում, զարգացնել և ընդլայնել հանրային քննարկումներն ու մասնագիտական հանդիպումները, երկխոսություն ստեղծել քաղաքացիական հասարակության, փորձագիտական համայնքի և որոշում կայացնողների միջև:

Հասանելի ձևաչափերի և նպատակային իրազեկումների միջոցով այս նախագիծը խրախուսում է քաղաքացիների ակտիվ մասնակցությունը և նպաստում ապացույցների վրա հիմնված քաղաքականությունների մշակմանը:

Նախագծի հիմնական բաղադրիչներն են՝

1. **Մեկ բոպեանոց կարճ տեսանյութերի ստեղծումը**, որոնք ներկայացնում են քաղաքական և աշխարհաքաղաքական բարդ խնդիրներն ու հարցերը:

2. «**Ժողովրդավարական անվտանգություն» (Democratic Security)** առցանց ամսագիրը հրապարակում է փորձագիտական վերլուծական հոդվածներ ժողովրդավարական անվտանգության, բարեփոխումների և Հայաստանի համար կարևոր քաղաքական իրադարձությունների վերաբերյալ:

3. **Քաղաքականությանն առնչվող փաստաթղթերի մշակումը**, որոնք կենտրոնացած են անվտանգության և, հատկապես սահմանային անվտանգության վրա՝ որպես ժողովրդավարական զարգացման հիմք:

4. Նախագիծը ներառում է **տարբեր շահառու խմբերի հետ քննարկումներ, համաժողովներ, վերլուծական տեղեկագրեր և մամուլի ասուլիսներ՝** ստեղծելով համագործակցային միջավայր քաղաքական գործիչների, դիվանագետների, քաղաքացիական հասարակության, մեդիայի ներկայացուցիչների, փորձագետների և քաղաքացիների միջև երկխոսության ծավալելու համար:

«Խթանելով ժողովրդավարական հաստատութենականացումը» ծրագիրն իրականացվում է 2025 թ. օգոստոս – 2027 թ. սեպտեմբեր ժամանակահատվածում **Ժողովրդավարության աջակցության ազգային հիմնադրամի** ֆինանսավորմամբ:

Ծրագրի ընդհանուր բյուջեն **166,165** ԱՄՆ դոլար է:

3. «**Հայաստանի դիմադրողականության, ժողովրդավարության և ինքնիշխանության բարձրացումը**» ծրագիր

«**Հայաստանի դիմադրողականության, ժողովրդավարության և ինքնիշխանության բարձրացումը**» ծրագրի **նպատակն է** խթանել Հայաստանի դիմադրողականությանը, ժողովրդավարությանն ու ինքնիշխանությանը ազգային անվտանգության հարցերի շուրջ դիվանագիտական և քաղաքացիական հասարակության ներգրավվածությունը բարձրացնելու, պետական քաղաքականությունը անկախ վերլուծություններով ուժեղացնելու ինչպես նաև մամուլում պետական նշանակության հարցերի շուրջ օբյեկտիվ լուսաբանում տարածելու միջոցով:

Նախագծի հիմնական բաղադրիչներն են՝

1. **Կարճ տեսանյութերի ստեղծումը**, որոնք ներկայացնում են ազգային անվտանգության, ժողովրդավարության և ինքնիշխանության հետ կապված առանցքային հարցերը՝ նպաստելով հանրության իրազեկվածության բարձրացմանը և հանրային քննարկումների խթանմանը:
2. **Հոդվածների պատրաստումը**, որոնք անդրադառնում են Հայաստանի ներքին և արտաքին քաղաքականության, անվտանգության և ժողովրդավարական զարգացման կարևոր թեմաներին՝ ապահովելով փաստահեն և անկախ վերլուծություններ:

3. **Քաղաքական վերլուծություն-զեկույցը**, որը համապարփակ կերպով ուսումնասիրում է Հայաստանի դիմադրողականության, ժողովրդավարության և ինքնիշխանության ամրապնդմանն առնչվող հիմնախնդիրներն ու զարգացումները՝ ներկայացնելով համապատասխան գնահատականներ և առաջարկություններ:

«**Հայաստանի դիմադրողականության, ժողովրդավարության և ինքնիշխանության բարձրացումը**» ծրագիրն իրականացվել է **2024 թ. օգոստոս – 2025 թ. հուլիս** ժամանակահատվածում՝ **Ժողովրդավարության զարգացման հիմնադրամի (Democracy Development Foundation)** ֆինանսավորմամբ:

Ծրագրի ընդհանուր բյուջեն **7,367,250** ՀՀ դրամ:

4. «Ես քաղաքական եմ» ծրագիր

«Ես քաղաքական եմ» ծրագրի նպատակն է բացահայտել Հայաստանում երիտասարդների քաղաքական մասնակցության մակարդակը՝ օգտագործելով ֆոկուս խմբերի մեթոդը, ուսումնասիրել հաջողված փորձը և մշակել կրթական ու հանրային հաղորդակցության գործիքակազմ՝ խթանելու նրանց գիտակցված ներգրավվածությունը ժողովրդավարական գործընթացներին:

Ծրագրի բաղկացուցիչներն են՝

1. **Առցանց հարցազրույցների կազմակերպում**, որի ընթացքում երիտասարդները, փորձագետներն ու քաղաքական գործիչները քննարկում են քաղաքական մասնակցության ձևերը:
2. **Որակական հետազոտության իրականացում՝** տարբեր համայնքներից երիտասարդների մասնակցությամբ ֆոկուս խմբերի ձևաչափով,
3. **Մեդիա արշավների անցկացում**, որոնք ներառում են թեմատիկ ռիլեր, ինֆոգրաֆիկաներ, ստիկերներ և մեմեր՝ ընդգծելով երիտասարդների դերը քաղաքական կյանքում,
4. **Ձեկույցի պատրաստում**, որը ներկայացնում է երիտասարդների ներգրավվածության մեխանիզմները:

Վերոնշյալ ծրագիրն իրականացվում է 2025 թ. հունիս – 2025 թ. սեպտեմբեր ժամանակահատվածում՝ **Ժողովրդավարության զարգացման հիմնադրամի** ֆինանսավորմամբ:

Ծրագրի ընդհանուր բյուջեն **500,000 ՀՀ դրամ** է:



5. ՆԱՏՕ հեռուստահաղորդաշար և կարճ տեսանյութեր. ծրագիր

Այս ծրագրի նպատակն է հայաստանյան հանրությանը տեղեկացնել ՆԱՏՕ-Հայաստան համագործակցության, դրա հնարավոր հեռանկարների վերաբերյալ՝ ձևավորելով ավելի իրատեսական պատկերացում և ընկալում, ինչպես նաև հակազդելով ՆԱՏՕ-ի դեմ ուղղված ապատեղեկատվությանը և քարոզչական նարատիվներին:

Ծրագրի բաղկացուցիչներն են՝

1. **Կարճ տեսանյութերի պատրաստում**, որը հայաստանյան հանրությանը ներկայացնում է ընդհանրապես ՆԱՏՕ-ի գործունեության և ՆԱՏՕ–Հայաստան համագործակցության մասին:







2. **Հեռուստահաղորդաշար,** որը ներկայացնում է Հայաստան–ՆԱՏՕ համագործակցության հեռանկարները, փորձում ձևավորել ավելի իրատեսական և հիմնավորված պատկերացում:

Վերոնշյալ ծրագիրն իրականացվել է 2025 թ. հուլիս – 2025 թ. սեպտեմբեր ժամանակահատվածում՝ **Վրաստանում ՆԱՏՕ-ի գրասենյակի** ֆինանսավորմամբ:

Ծրագրի ընդհանուր բյուջեն **6.900 եվրո** է:



ԱՌՑԱՆՑ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ

«Ժողովրդավարական անվտանգություն»

ԱՌՑԱՆՑ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ

Ինքնիշխանության ամրապնդումը՝ Հայաստանի արտաքին քաղաքականության բազմազանեցման միջոց

Սույն վերլուծական հոդվածը Հայաստանի արդի քաղաքական կյանքում գոյություն ունեցող երկու առանցքային և. միաժամանակ. միահյուսված հասկացությունների մասին է՝ ինքնիշխանության ամրապնդման և արտաքին քաղաքականության բազմազանեցման: Ինքնիշխանության ամրապնդումը Հայաստանին բազմազանեցված արտաքին քաղաքականություն վարելու հնարավորություն է ընձեռելու: Դա. ինքնաբերաբար. նպաստելու է երկրի ինքնիշխանության շառավղի ընդլայնմանը: Եվ. ընդհակառակն. ինքնիշխանության նվազեցմ դեպքում նահանջ է արձանագրվելու դեպի տարիներ ի վեր գոյություն ունեցող ...

18 Մայիսի, 2026



ԱՌՑԱՆՑ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ

Գուբե՞ ոնիա, թե՞ իշխանություն. պետության երկընտրան

Հայաստանի և Ռուսաստանի հարաբերությունների շուրջ վերջին տարիներին ակտիվացած «գուբե՞ ոնիա, թե՞ ինքնիշխան պետություն» բանավեճը որքան էլ քաղաքականացված լինի, իրականում դիպուկ ձևակերպում է անկախությունից հետո հայկական պետականության ամենախորքային դիլեման: Խոսքը ոչ միայն արտաքին քաղաքական կողմնորոշման մասին է, այլև՝ առավել հիմնարար հարցի. ...

13 Մայիսի, 2026



ԱՌՑԱՆՑ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ

Սոցիալական ցանցերի օգտագործումը Հայաստանի դեմ հիբրիդային գործընթացներում

Մեր ժամանակների հաղորդակցական համակարգերի հնարավորությունները բերել են ոչ միայն կրթական, սոցիալականացման, հանրային հաղորդակցման համակարգերի զարգացման, այլև՝ անվտանգային նոր մարտահրավերներ: Պետության, հասարակության և անհատի անվտանգության հիմնարար բաղադրատարրերից մեկն է դարձել տեղեկատվական անվտանգությունը: Ավելին, մեր օրերի հակամարտություններում տեղեկատվա-հաղորդակցական դաշտը դարձել է հիբրիդային գործողությունների անբաժան բաղադրիչ՝ հանրային կարծիքի մանիպուլյացիայի միջոցով: Նման դրսևորումների ակնհայտ օրինակ ...

11 Մայիսի, 2026

6. «Ժողովրդավարական անվտանգություն» առցանց պարբերական

«Ժողովրդավարական անվտանգություն» առցանց պարբերականի ստեղծում ծրագրի նպատակն էր նպաստել Հայաստանում ժողովրդավարական ինստիտուտների կայունության ամրապնդմանը և անվտանգության ոլորտում նոր մոտեցումների բացահայտմանը:

Ծրագրի շրջանակում պատրաստվել են ընդհանուր առմամբ **25** վերլուծական հոդված և **31** կարճ վերլուծական գրառում (մեմո), որոնք անդրադարձել են Հայաստանի արտաքին և ներքին քաղաքականության կարևոր հարցերին, տնտեսական զարգացումներին և հնարավորություններին, ընտրական համակարգի բարեփոխումներին, ինչպես նաև միջազգային քաղաքականության մեջ առկա նորագույն աշխարհաքաղաքական միտումներին:

Վերոնշյալ ծրագիրն իրականացվել է 2025 թ. փետրվար- 2025թ. հոկտեմբեր ժամանակահատվածում՝ **Ֆրիդրիխ Նաումանի «Հանուն ազատության» հիմնադրամի** ֆինանսավորմամբ:

Ծրագրի ընդհանուր բյուջեն **10,000** եվրո է:

7. «Դիլեմա» հեռուստահաղորդաշար

2025 թվականի ընթացքում «Հայկական խորհուրդ» հետազոտական կենտրոնը **Բուն TV-ի** աջակցությամբ հեռարձակել է **«Դիլեմա»** հաղորդաշարը, որը նվիրված է անվտանգության և ժողովրդավարության հիմնահարցերին:

Հաղորդաշարի տարբեր թողարկումներում քննարկվել են տարածաշրջանային անվտանգության խնդիրները, կիբեռանվտանգության սպառնալիքները, ընտրական գործընթացների թափանցիկությունը և մարտահրավերները, ինչպես նաև ուսումնասիրվել դրանց ազդեցությունը Հայաստանի ռազմավարական միջավայրի, արտաքին քաղաքականության և ժողովրդավարական զարգացման ուղղությունների վրա:

Հաղորդումներն ապահովել են բարձր դիտելիություն՝ ընդգծելով ներկայացվող թեմաների հանրային հետաքրքրությունն ու կարևորությունը:

Ծրագիրը իրականացվել է *2025 թ. սեպտեմբեր – 2025 դեկտեմբեր* ժամանակահատվածում՝ **Բուն TV-ի** ֆինանսավորմամբ:

Ծրագրի ընդհանուր բյուջեն **4,800,000 ՀՀ դրամ** է:

Ֆինանսական Հաշվետվություն

Մուտքեր	ՀՀ Դրամ	ԱՄՆ Դոլար	Եվրո
Բուն Գիտամշակութային Հիմնադրամ	11 300 000		
Ժողովրդավարության Զարգացման Հիմնադրամ	2 067 250		
National Endowment for Democracy (Ժողովրդավարության ազգային հիմնադրամ)		60063	
NATO			6 900
Նվիրատվություն, աջակցություն	7 600 000		
Ընդամենը	**20 967 250**	60063	**6 900**

Ֆինանսական Հաշվետվություն

Ելքեր	ՀՀ դրամ
Աշխատավարձ	24 363 051
Հաշվապահական և իրավաբանական ծառայություններ	1 941 340,00
Բանկային ծառայություններ	120 070
Հարկային վճարումներ	4 872 610
Գրասենյակի վարձակալություն	4 515 000
Փորձագիտական աշխատանքներ	4 294 309
Գովազդ և մարկետինգ	1 407 095
Միջոցառումների կազմակերպում	2 567 000
Այլ վարչական ծախսեր (Գույքի, տեխնիկայի, կահույքի ձեռքբերումներ, կոմունալ, գրասենյակային ծառայություններ, տպագրություն, կայքի վերազինում)	2 777 523
Ընդամենը	**46 857 998**

Աշխատակիցներ

Արեգ Քոչինյան
Նախագահ

Ռուզան Նավասարդյան
Ֆինանսական տնօրեն

Մարիամ Գրիգորյան
Ծրագրերի համակարգող

Ժաննա Սավոյան
Գործադիր օգնական

Ռոբերտ Ղևոնդյան
Փորձագետ

Սամվել Մելիքսեթյան
Փորձագետ

Սիրանուշ Ռուբենյան
Սոցիալական մեդիայի պատասխանատու

Արփի Պետրոսյան
Ծրագրերի օգնական

Էդգար Վարդանյան
Ասոցացված փորձագետ

Նարեկ Մինասյան
Ասոցացված փորձագետ

Տիգրան Մուղնեցյան
Ասոցացված փորձագետ

Դիանա Կարապետյան
Ասոցացված փորձագետ

Սերոբ Ոսկանյան
Խմբագիր

Սոնա Սերոբյան
Թարգմանիչ

Գործընկերներ

NED NATIONAL ENDOWME FOR DEMOCRAC
SUPPORTING FREEDOM AROUND THE WOR

Democracy Development Foundation

FRIEDRICH NAUMANN FOUNDATION For Freedom.
Central Europe

“hd Centre for Humanitarian Dialogue
Mediation for peace

:Բուն TV
boon.am

civil society

NATO
OTAN

G | M | F
IDEAS LEADERSHIP HOPE

Կապ Մեզ Հետ

www.council.am/

✉️ ifnfo@council.am

https://www.facebook.com/armeniancouncilngo

☎ +374 55 342 639